

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍՏԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂՔԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Է ՈՐՂՂԱՆ ԱՊ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Արտոնահեր. Ժ. ՄԻՒՆԻԹԷ:

# ՆՈՐ ՕՐ

## ԼՐԱԳԻՐ

### ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՅԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՐ ԵՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գանձի համար	Տարեկան	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից	Տարեկան	60
»	Վեցամսեայ	35

ՍՐՏԱՍՏԱՍԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	»	Իրանց	18
Վեցամսեայ	»	»	10

ՌՈՒՍԻՆՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	»	Բուբլի	7
Վեցամսեայ	»	»	4

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻՍԿ Է

ԵՒ ԲՂՂԱՍԱՐԻ ԾԱԽԹԸ

Թերթն վարչութեանը վրայ է:

## ՍԱՍՈՒԼԸ ՄԵՐ ՄԷՋ

Ազգերու զարգացումը հաստատուն հիմքերու վրայ դնող ու անոնց քաղաքակրթութեան ահագին զարկ մը տուող Մամուլը, որուն ազատութեանը շատ բան կը պարտի մարդկային ընկերութիւնը, անվիճելի կերպով նկատուած է առաջինը բարեքննչէն, զորս ընծայած ըլլայ գիտութիւնը:

Մամուլը ազատութիւնը՝ մտաւորական ու բարոյական ոյժն արտադրելով՝ ազատագրած է միջին դարու շրջաններով պրկուած գերի միտքը. տապալած է բռնութեան հսկայ շէնքը, սուրի, հուրի մէջէ անցնելով հարթած է դարերու դիպած կանխակալ կառնիքներու լուսնը, մտքը բազմապիսի անտեսութեան փշուռ ստպարէզը, նոր ուղի մը բացած է մարդկութեան. ճամբայ մը սր զայն առաջնորդելու սահմանուած է գէպ ի լոյս ու գէպ ի կեանք:

Ահա՛ Մամուլը:

Հիմայ խնդիր է գիտնալ թէ՛ այդ հրաշագործ զօրութիւնը, սր այնքան թմրած սերունդներ արթնցուցած է դարաւոր քննչէն, ա՛յնքան մեծած ազգեր յարուցած է գերութեան գերեզմանէն. այդ զօրութիւնը կ'ըսեն: սր Արեւուն լայն ու կեդրոնահասկ ոյժն է միանգամայն, խնդիր է գիտնալ թէ՛ մեր մէջ ի՞նչ դեր կատարած է ան: Հարցումը պարզ է, բայց պատասխանը՝ բարդ, պատմական ու քննադատական հատորներու գործ, ինչ որ դուրս է մեր համառօտ տեսութեան նեղ շրջանակէն:

Անցողակի ակնարկով մը կրնանք սակայն գաղափար մը կազմել թէ՛ ի՞նչ դեր կատարած է ու դեռ կը կատարէ Մամուլը մեր մէջ:

Բազմալէզու, և դարուն առաջին կիսուն մէջ երեցող ուրիշ կարգ մը պարտաւորական հրատարակութիւններ, շատ քիչ տարբերութեամբ, գրեթէ միևնոյն եղանակը կ'երգէին, տաճկերէնի մտեցող աշխարհաբարով մը՝ վարժապետի գերն ստանձնած՝ առակներով, առասպելներով, մանրամասնութեամբ, արձակ ու ստանաւոր. իրենք Մենստր, ռամիկը՝ Տեղեւալ, խրատականներով յաճախ ցամաք, երբեմն ալ հիւթայից, կը փորձէին պատրաստել նոր սերունդի մը բարոյականը, առանց զայն պտտցնելու քաղաքական, տնտեսագիտական ու ընկերային կենսական հարցերուն շուրջը. ու ընթերցող հայութիւնը՝ դժպտողական տարրական դասընթացքի Ա. տարին բոլորելով կը թեւակոխէր Բ. տարին, — «Մանուկն աճէր եւ զօրանայ» ի համեմատութեամբ:

Բազմալէզու թագուհի կղզիին մէջ քաջուած՝ ակամօք խցած էր Կ. Պոլսոյ, Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ անցած դարձածներուն. իր երգը կ'երգէր ան, միաձայն ու միակերպ. Բագրատունի և Ալիշան հոն կը փայլէին իրենց նուագներով ու թարգմանութիւններով. ազգը բոլոր՝ երգիչ կտրած էր, խմբագիրներն ալ՝ վարդապետ կամ դպիր, գրաբար կ'արշաւէր հետիոտն ու հեծեալ:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«Նոր Օր»ի յարգելի աշխատակիցներէն Տիար Ա. Փաշեան, որ արդէն ծանօթ է ընթերցասէր հասարակութեան իր շահեկան յօդուածներով, այս անգամ կ'ըսուի թերթին մէջ հրատարակութեան տալ իր յօդուած այս նորավէպն, որուն հրահանգիչ պարունակութիւնը կը յանձնարարուի մեր Պատ. ընթերցողներուն:

## ՉԿՆՈՐԱԸ

Փողովորդեան մտաւորականներ, որոնք՝ օտս անգամ՝ անոր բռնապետութենէն ծր, նուազ կ'առնեն, զայն կ'աւելցնեն եւ մօտաւոր կ'ընեն: Վ.Ի.Գ.ՕՐ ԳՈՒՋԷՆ

Ա.

Երբ երկու պղտիկները ինքզինքնին փողոցը գտան, հիւանդ մօր մը գորովայի աչքերէն հեռու, ի խնդիր խտտախրտ հօր մը, որուն առաւօտեան ապտակներուն յառաջ բերած ուռեցքը դեռ բողբոջին անհետացած չէր անոնց ցից այտուէն, իրենց չորս կողմը դեռել փորձեցին ստակամբ:

Տարափ մը՝ Փետրվարի անձրեւ՝ որ անդադար կը

տեղար կէտրէն ի վեր, թանձր եւ գրեթէ շոշափելի մթութեան մը մէջ թաղած էր փողոցները, այնպէս որ կարելի չէր տեսնել աստղերը՝ սքողեալ սեւ ամպերուն կուտակներուն ետեւ: Խոնաւ ցուրտ մը կը թափանցէր ամենահաստ զգեստները եւ այդ աղքատաբնակ թաղին հաղուաղէպ եւ արագաքալ անցորդներուն աբիւնը կը ստուգէր երակներուն մէջ:

Ժամը գիշերուան երեքն էր՝ ըստ թրքաց: Տղեկները իրարու ձեռք բռնած եւ միւս ձեռքերնին իրենց լօգիկներուն ծակոված գրպաններուն մէջ խօթած՝ կը քալէին դայթ ի դայթ, որչափ որ կը ներէին իրենց մանտրուակ սրունքները, եւ սալարկներուն շատ մը տեղերէն հանուած քարերէն գոյացած խոռոչները, որոնք հիմա ջրով ու տիղմով լեցուած՝ կը շփշփային մթութեան մէջ յանկարծ իրենց մէջ ինկած փոքրիկ ոտքերուն միտմէն և մինչեւ տղեկներուն երեսը կը ցայտեցնէին, իրենց պարունակութենէն:

Մանուկներուն երիցագոյնը՝ ներսէս՝ որ հինգը դեռ նոր բոլորած էր, անձրեւին ուղղակի կ'անակն ի վար իջնելը արգիլելու համար լօգիկին օձիքը վեր հանած եւ եղբոր, քառամեայ Սահակինն ալ այնպէս ըրած էր Սակայն իբր հագուստ վրանին նետուած ցնցոտիները եւ իբր ոտնաման ոտքերնին անցուած անկրունկ եւ ամեն կողմէն սպտառուած մուշակները ոչ միայն տարափին սաստկութենէն չէին պատասպարեւ տղեկները, ալ որ աւելի գէշն է՝ ջուրին բնական հոսման արգելք մ'ըլլալով, այն խեղճ մանկանց մինչեւ ծուծը թափանցելուն աւելի կը նպաստէին. այնպէս որ եթէ այն մի-

Փարիզի Մասնաց Աղաւնին, երիտասարդ Նար Պէյի աւելնուտ ու թուրքիկ քերթուածներով կը մնէր իր քնքոյշ վուվուները. և ահա՛ Մասնաց իր ամպապատ կողերէն կը մերկանայ, վեր կը ցցէ ձիւնապակ գագաթը. կը ժպտի, կը գոռայ ու վերջապէս, Վոսփորի եղբորը կը կանգնէ աշխարհաբարի վերածնութեան կոթողը, որուն շուրջը կը սկսի թափօր դառնալ դարուս վերջին կիսուն նորահաս սերունդը, խանձարուրքէն բազուկները դուրս հանած. հայութեան այս նոր մանուկը՝ ճիշդ կը լեցնէ շրջակայքը. կ'արթնան ծերերը, խաւարի ու լոյսի պայքարը կ'սկսի. մարդիկն ըրը շտապաբար ու խաւարեալ, իրարու գլուխ կը պատուեն. ամիրաներու տիրապետութեան վերջալոյսը կը մարի, կը թաղուի խաւարին գիրկը:

Անգին արշալոյսը կ'սկսի ծայր տալ. Հիւսիս-արեւմտի Արծիւ Վասպուրականի՝ Ծիլն Աւարայրի Մանգուլէն, և ինչ կը յեղաշրջէ գրական աշխարհը. ազգային, գրական, քաղաքական, ամեն տեսակ նիւթերը մատչելի կ'ընեն հասարակութեան զոր արդէն սկսած էր շահագրգռել արտաքին քաղաքականութիւնը. ազգ ու հայրենիք, սահմանադրութիւն, ամեն օր կ'երգուին, կը հռչակուին, եկեղեցիները, դպրոցները, տները, գուժարուժները մէջ, ամենուրեք. մամուլը ազատութիւնն իր գիրիթը հասած էր. պաշտուած գիյոց հին էր, որուն շողերէն շրջած Մանգուլէն առաջինը կը լայ բանտի մէջ իր կրկնապետութեան պաշտօնը մատուցանելու, Ձէյիլունի մեծ պատարալովին արձագանգը հնչեցնելուն համար. բանաստեղծներն ամեն տարեդարձի, նոր երգեր կ'ստեղծէին

Չոյնն այն բիւրաւոր տեսակ մը բարեխնդրէն մին այդ անմեղները տեսնէր, զանոնք բողբոջին մերկացրները աւելի մարդասիրական պիտի գտնէր:

Մանուկները քառօր ժամէ ի վեր կը քալէին. բայց, գրեթէ ոչինչ յառաջացած էին: Բարեբաբաղդաբար, դառնալու վտոյց չկար. ապա թէ ոչ, եթէ փողոցին ամառութիւնն ու մթութիւնն ալ չ'ըլլային, ցուրտէն թմրած, անձրեւէն կուրացած անտարակոյս պիտի մոռլորէին:

Թանկարծ Սահակ խոռոչի մը մէջ դիպեցաւ եւ հակուակ մեծ եղբորը ճիւղերուն՝ երեսին վրայ ինկաւ: Ներսէս ծոցեցաւ. եւ լալաղին՝ կրցածին չափ կրկնելով վերցուց զայն: Սահակ կանգնեցաւ՝ բարձրաձայն լալով: Ինքզինն ոտքը ցաւած, ծունկը սկիւթուած, երեսը ցեխոտած եւ կուրծքը քիչ մ'աւելի ջուր լեցուած էր: Ներսէս թէ՛ իր եղբորը լալուն կը մասնակցէր եւ թէ՛ մայրական հոգատարութեամբ մը զայն կրկնող մէջ սեղմած, իր համբոյրներով միթարելու եւ զգացած ցաւերը ամոքելու կը ջանար:

Աստուած աղքատը թէեւ երկրային բարիքներէ զրկած է, սակայն իբր փոխարինութիւն, աւելի գուժ եւ աւելի ճարպիկութիւն ու քաջասրտութիւն պարգեւած է անոր: Որ եւ է պարագայի մը մէջ, ուր հարուստը կը շուարի յուսահատ, տղքատը մէկէն աւելի հնար կը գտնէ եւ ինքզինքը կը քաջալերի:

Սահակ եւ ներսէս եթէ ունեւորի զաւակներ ըլլային, ոչ միայն չպիտի համարձակէին այն օրին եւ գիշերուան այն ժամուն դուրս ելլելու, այն նաեւ եթէ

ԱՂԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆՈՒՆԻ Ի ԹԻՒ 39 Ի ԱՆՉ ԿԵ ԿԱՐԳԱՆՔԻ

Կ'իմանանք թէ՛ Վիէնայի Միթարեան Միարանութեան մէջ պառակտումները աւելցեր են վերջին օրերու: Պոլիս գտնուող երիտասարդ անգամներուն և Վիէնա գտնուող երիցագոյն անգամներուն մէջ: Առաջինները Հոսովմայ Աթոռին դիմած են բողոքելով երիցագոյններուն դէմ՝ որոնց զլուխ կը գտնուի եղեր Արքահայր Այսրեան Արքեպիսկոպոսը:

Այս մասին կ'ըսուի թէ՛ Պոլսոյ հատուածը փափագող է եղեր վանական սովորութիւններուն մէջ պահել հայկական ձևերն: Իսկ Վիէնայի մասը ընդհանրապէս լատինացնելու հետամուտ է ամեն ինչ և թէ՛ Վիէնայի վանքին մէջ պատարագը բոլորովին լատինական ըրած են: Բողոքիկ մատուռի մը մէջ միայն հայաձև կը պատարագուի եղեր: Այս եղած է ներկայ անհամաձայնութեան բուն շարժառիթը, և այդ պառակտումներուն պատճառաւ է որ «Հանդէս Ամսօրեայի Ապրիլի Թիւր հազու հրատարակուած է, մինչդեռ ամեն ամիս կանոնաւորապէս կ'ընէր ասկէ առաջ:

— Դարձեալ նոյն թերթի թիւ 40 Ի մէջ:

Վիէնայի Միթարեան Միարանութեան մէջ ծագած երկպառակութիւնը հետզհետէ սուր կերպարանք մ'առնելու վրայ է: Պոլսոյ, Իզմիրի, Այսրեան Վիէնայի Միթարեան վանականները միայն են Վիէնայի Մայր վանքին դէմ, ու մէկէ աւելի վարդապետներ թողած ու հեռացած են Վիէնայէն: և կ'իմացուի թէ այդ վարդապետներէն մին Միջերկրականի Արշիպեղագոսի կղզիներէն միոյն մէջ Վիէնայէն բողոքովին անկախ զտա հաստատութիւն մ'ալ հիմներ է: Արդ այս վէճը քննելու համար յատկապէս Վատիկանէն պաշտօն տրուած է Բուպեան Գերապայծառին, որ Հռոմի Աթոռին քով Հայկաթովիկ Պատրիարքութեան ներկայացուցիչն է և համբաւաւոր, իբրև միջնաւոր լատինասէր և հակաւարդ Միթարեաններու ու իրենց ուղղութեան:

— «Բազմալէզուի ու մեծայարգ խմբագրապետ Վեր Հ. Երեմեան իր առողջութիւնը դարմանելու համար Պոլիս դայած և Բէրայի Վեներաբոլ Միթարեանց վարժարանը հիւրընկալուած է: Բազմաթիւ լատինասէր և ուսումնասէր ազգայիններ կը փութան այցելել Վեր Հայրը:

Սահմանադրութեան խորանին համար. ազգային իշխանութիւնը հիմնուած էր արդէն. ու ազգը բոլոր՝ արդէն ու ինդամն:

Ազգ. Մամուլը՝ չափահասութեան շրջանը մտած էր ա՛լ, երբ ասպարէզ նետուեցաւ նոր ու փառաւոր մարտիկ մը, Արեւելեան Մամուլը բերելով թրքահայերուն մինչդեռ կովկասի մէջ սկսաւ գէմբը ցայց տալ Մշակ, բրիչը ձեռքը, պեղել, իր խոփու փորել հայ միտքը: Մշակ ու Արեւելեան Մամուլը, ահա՛ փոքր գարու հայ մտքին հայելին:

Իսկ հիմա՞յ:

Օ՛, անթիւ են թերթերը, խոտի պէս կը բուսնին անոնք, թէև, աւա՛ղ խոտին կարծատե կեանքը կ'ունենան:

Այս վերջին տասը տարիներու մէջ, թողով թրքահայ ուսուսչայ թերթերը, Արտասահմանի մամուլը՝ ապշեցնող տեսարան մը կը պարզէ:

Այսօր, երեք կարգի կարելի է բաժնել մեր պարբերական հրատարակութիւնները.

Յեղափոխական, Ազատական ու Պահպանողական. յեղափոխական թերթերը կը պահեն իրենց բարձրութիւնը, կուսակցական կիրքերէ ազատ ապրելու առաքինութիւնը կ'ունենան, կը լրացնեն ազգային ճշմարիտ պետքերը, յուսանք թէ այդ կարգի թերթերուն տարածել փորձած գաղափարները գործնական ու հետևաբար օգտակար ըլլան. կրնանք սպասել իրազօրծումը մեր ազգային բաղձանքներուն, անոնց ուղղութիւնէն ու պարունակած յորուածներէն, որոնք հրապարակը կ'ողողեն. պատասխանը, գծադրաբար ժխտական է, փոքրիկ բացառութեամբ մը:

Ազատական թերթերը, որոնք կը սիրենք կարծել թէ՛ չեն պատկանիր որևէ կուսակցութեան, ի՞նչպէս կը կատարեն իրենց պաշտօնը. դա բաւական կ'ընեն ինդիր մ'է. սակայն, պէտք է լատ համալուր թէ՛ արտասահմանի մէջ մանաւանդ, ուր մամուլը ազատութիւնը լիութի կը վայելենք, շատ մեծ ու շատ փրկաւէտ ծառայութիւններ կրնան ընել ազատական անկախ հրատարակութիւնները, եթէ, սակայն, չ'ըրնուին սեղմ ու սահմանափակ միջավայրի մ'ազդեցութիւնէն: Իսկ պահպանողականները. խօսիլը չ'արժեք այդ մութի ու մերուտի սողուններուն վրայ. անոնք գոյութեան երեքք իրաւունք չունին, երբ հաշուի առնենք ներկայ կացութիւնը՝ այն աղբին, որուն համար կը կարծեն գրել, այդ յետագիմութեան ու ազատութեան ներկայացուցիչները, մամուլը սրբութիւնը պղծող ու փայլը ժանգոտող այդ երանելի փառիսեցիները:

գիւղաւանդ դուրս գտնուած ըլլային, անկիւն մը կրծկուած լալէն զատ ոչինչ պիտի ընէին:

Ներսէս իր կարգաբեր քիչ մը սիրովէն և կոյրծքին վրայ սեղմելով քիչ մը ջերմութիւն տալու աշխատելէն ետքը, վերջին անգամ մ'ալ համբուրեց և դարձաւ Սահակին վզին պլեկէն ետքը քուրջի կտոր մը, զոր հեռանց մայրը իր դողա՛նար ձեռքերով հոն փաթթած էր, ստած ձեռքերուն վրայ քանիցս փչեց և նորէն թեւէն բանելով քալել սկսաւ:

Քիչ մը հեռուն Սահակ թէ՛ ոտքին ու թէ՛ ծունկին ցաւէն և թէ՛ բոլոր մարմնոյն թրջելովը վրան եկած սարուսէն շարժելու անկարող, նորէն սկսաւ լալ այնքան սրտառու չ'կերպով որ մտած մայր մ'իսկ զերեզմանին մէջէն դուրս վերցուցած՝ բաղկատարած թոյլատուութիւն պիտի ինդրէր Արարչէն իր տառապող որդւոյն օդնութեան վազելու համար:

Ինչո՞՞ ներսէս նորէն սկսաւ իր անօգուտ գգուանքը: Մանկիկը ցաւ կ'զգար և կը մտէր, անձրեւը կը շարունակէր, փողոցին մէջ ձայն ձուռն չկար. տուններուն պատուհաններուն փեղկերն անգամ գոցուած էին, մթնութիւնը կատարեալ էր:

Ներսէս գրկեց Սահակը, երկու քսլ առաւ և կեցաւ, բաւական զօրաւոր չէր տանելու իր պզտիկ եղբայրը: որուն ընկան բռնին վրայ բարդուած էր թրջուած հագուստներուն ծանրութիւնը:

— Ես կը կքիմ, ըսաւ. ներսէս ճարահատած, դուն չալակս կ'ըլլես, թեւ երովք վզիւ կը փաթթուիս, ես

կարգ մը թերթեր ալ ունինք, որոնց ուղղութիւնը գեռ գծուած չ'ըլլալով՝ ալ ու ձախ կը յարձակին. տղմութեամբ ու արիւնալեզու մերկութիւններն դուրս կը հանեն. գորտերու կալուցն ու կարիճի խայթոցն ունին ատոնք: Հոս լրագրութեան պատմութեան հոտին անձնական դձուձ բղիտումներու և հայհոյանքներու ցանկ մը կը կազմեն, մէկ երկու սե էջերու մէջ ամփոփուած. կ'արդահատինք այդպիսիներու վրայ, և կը մաղթենք որ միջնորդը մաքրուի այդ անսանկիւններէն ու ցեցերէն որոնք կրծիլ դիտեն ու ապականել:

«ՆՈՐ ՕՐ»ի յաջորդ թուով պիտի հրատարակուի մեծանուն հայասէր Մ. Անասու Ֆրանսի Հայոց Որբերուն նուիրած յուզիչ յօդուածին թարգմանութիւնը:

Ա Ն Ձ Ո Ւ Կ

Մտղիկ մ'է այն օտարութեան մէջ լուսած, վարձին երեսին ունենի մը սրբազգած: Ամպաղէմ ծուխն է մութ ողորտին մայրերու Որոց զաւակը պանդրատած է հեռու: Հեղ աղանոյ նրաւ վուվուն հոգեբուխ Առաւօտուն, պաղ երկին տակ մութ ու թուխ: Լըռութիւնն է որ առանձինքն կըծկի կէս մթնութեան մէջ տխրաբոյր խրցիկի. Բացի՛ր դուրը, սենեակն համակ է թափուր, Ո՛չ կարասի շարժի, ո՛չ մի վարագոյր. Եւ համարիս թէ մին է այն խուցերէն Ուստի գեռ նոր մեռել մը գուրս հանր են: Գատարկ սրբուակ մ'է ուր անոյ իւր մը կար Եւ որ հաղիւ այժմիկ ունի բոյր տրկար. Լուսինն է որ, երկար ծոցէն բեղմնաւոր Մընած արծաթ արեւծաղիկ միամօր, Ընդ վայրայած կապոյտին մէջ ամայի, Անձկա արչար, երկրիս նայի ու նայի, Կարծես անոր զինկրնդիտանիլ բաղձալով. Նաւ մ'է ծրիուն փոթորկալոյ ի սեւ ծով, Որ ցանգ միտի դէպ ի ցամաք ցանկալի, Ուր յաւիտեանս բընաւ պիտի չը հասնի, Հորիզոնին սկընկատոյց կորիւնն է Որ որսաբեր դարձող առիւծն որոնէ: Գիրք մ'է բացուած որուն թերթերն ամեն հով Տարուբերէ գորովազին զըգուելով: Թոյլ թաշկինակ մ'է արցունքով յազեցած, Գերուհի մը քուրձ ու մոխիր ըզզեցած Երջանիկ վէշա մ'է, կամ նայուածք մ'անկնդան Որ սեւեռի անդունդի մը խորութեան: Միակ շուշան մ'է ծլած ի մուլը մարգարօտ, Ժողովուրդներն անուանեցին զայն — Կարօտ: Զ. Ս.

ալ կը բռնեմ ոտքերդ զոր քովերէս դէպ առաջ կ'երկընցես և անանկ կ'երթանք:

Սահակ շալկուեցաւ: Ներսէս խիստ դժուարութեամբ և մէկ ձեռքովը քովի պատին յենլով հաղիւ կրցաւ ոտքի ելլել:

Այն բնոր զոր փոքրիկն ներսէս կը տանէր իր մանկական ուսերուն վրայ, մայրական մտատանջութեան մ'արդիւնքն էր:

Կինը՝ այն իրիկուն երբ ջերմէն յաղթահարեալ ինկաւ խշտեկին վրայ, ինքզինքը շատ գէշ և վերջին վայրկեանին մօտ տեսնելով՝ ուղած էր մեռնելէ առաջ անգամ մ'ալ տեսնել իր ամուսինը, և անոր յանձնարարել երկու պղտիկները: Միտքը դրած էր երգում ընել տալ անոր փոխելու իր ընթացքը, գէթ իսէր այն մանկիկներուն, զոր տարիներէ ի վեր միայն գիշերը կրնար տեսնել՝ իրենց անկողնին մէջ, եթէ կրնար գիւնովութեանէ աչքերը բանալ:

Այս նպատակաւ էր որ ներսէսին ըսած էր երթալ կանչել իր հայրը, որ եթէ իրեն թողուէր, ո՛վ գիտէ, ե՛րբ պիտի գար, եթէ գար: Բայց խորհելով որ ժամանակն անցած է, օգը սարսափելի և փողոցն ամայի, Սահակին ապապրած էր որ եղբորը հետ երթայ:

Ներսէս իր բռնին տակ ընկճած՝ կրցածին չափ կը շտապէր:

Հիմայ, հեռուէն, փողոցին մէջ, բարակ գծի մը վրայ ցեխեր և ջուրեր կը փայլէին. լոյս մը ցումնալով ապակեղուէ մը և մառախուղի մէջ աղօտանալով կը լուս-

սաւորէր սյն կողմը: Անձրեւը մեղմացած էր: Լոյսին կողմէն ազմկալի և խաղող ձայներ կը լսուէին: Ներսէս սիրտ առաւ և քայլերը փութացուց:

Երբ լոյսին և ձայններուն աւելի մօտեցաւ, Սահակը շալակէն վար իջեցուց:

— Ահա հասանք, ըսաւ:

Տղեկները լոյսին մէջ մտան, ճիշդ նոյն պահուն անձրեւն ալ դադարեցաւ:

Լոյսը դուրս կը ծաւալէր սրճարանի մը ամբակի փակուած ապակեղունէն: Ներսը լեզուած էր բազմութեան արտաշնչումին արտադրած գողորհովը, որ բազմիքի մը վերածած էր վայրը:

Մանուկները փոխանակ արտորոք մտնելու այդ բարերար և ուսք մթնոլորտին մէջ, դրան դուրսի կողմը կը կենային՝ իրր քա՛մուած, ցուրտէն սկոտանին բախելով և խայթուածոց կենթարկուած հիւսիսային սաստկաշունչ հովի մը, որ անձրեւաբեր ամպերը ցերեցան կ'ընէր:

Ներսէս և Սահակ իրենց բոլոր մարմնով կը սարսուային և անձկուտ սկնարկներ կը նետէին դէպ ի ներս:

(Շարունակելի)

Արաբիքի Որբերու Հոգատար եւ Վասպուրականի Որբախնամ ընկերութեանց կողմէն Գաֆէ Լիբրարիէնի զինաց, Օլթընլիկէնի վաճառատան մէջ ի տես գրուած է «Գաւառացի Հայուհի»ի նկարը, գործ մեր աշխատակից-ներէն համակրելի նկարիչ Տիրա Երուանդ Տէմիրճեանի:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

— Բէթրսպուրկէ մահը կ'իմացրնեն զիւանագէտ Ալէքսանդր Իյոնիսի որ զեր մը խաղա-ցած է Ռուս-Քրքական պատերազմէն վերջը Պալ-քանեան զէպրերուն մէջ:

Պ. Իյոնիսի ապարէզը Ալէքիսիէ յէն կ'սկսի ուր 14 տարի Ռուսական ընդհ. հիւպատոս ե-ղած է: Երբ յարարեց թիւններն ոկսան ձգալը Պուլկարիոյ Ալէքսանդր Իյոնիսին ու Ռուսիոյ միջև, Պ. Իյոնիս կանչուեցաւ Պրազիլէն ուր այն ատեն կը գտնուէր, և զրկուեցաւ Սօֆիա: Կիսինք արգէն թէ իր պաշտօնը ինչպէս վերջացաւ Պաթէնպէրկի Ալէքսանդրին գահըն-կեցումովը:

Պ. Իյոնիս յետոյ քննիչ-անօրէն կարգուե-ցաւ Գահիրէի Հանրային Պարտուց մտուակին, այդ պաշտօնէն հլաւ 2 տարի առաջ և գնաց Զուլիցերիա, իբրև Ռուսական ներկայացուցիչ:

Հանգուցեալը 33 տարեկան էր: «Փար ա' Ալէքսանտրի » ի Կ. Պոլսոյ թըղ-թակցութեան կը քաղենք հետեւեալը:

Հայաստանի մէջ, Գուրգերը կը շարունակեն թա-լանն ու հարստահարութիւնները, մեղաւոր ունենալով Օսմ. պաշտօնատարները: Իշխանութիւններէն պաշտպա-նութիւն գտնելու սին յոյսով, շատ մը հայեր մասնա-տական եղած են. ասով քիչ մ'անձնական ապահովու-թիւն չանած կ'ըլլան: Սակայն քուրդերը չ'են գաղբի-թալլելէ այս մահմետական նորահաւատները, քանի որ կրօնը լոկ պատրուակ մ'է և իրենց նպատակը թալանն է:

Ռուսիա խիստ լեզուով ծանուցապիր մ'ուղղած է Բ. Գրան, պահանջելով որ ինք Օսմ. Հայերը պաշտպանէ, ապահովով անձամբ գործել եթէ իր այս բողոքներուն հետեւանք չ'ըրուի: Այս բողոքը պլատօնական պիտի մնայ և և ապարդիւն: Հայերը չ'են կրնար ա'լ մէկու վրայ յոյս դնել: Տէրութիւններն ա'յնչափ գործի ունին Չինու մէջ և այլուր, որ Հայերով չ'են կրնար զբաղի:

Վերջերս Հաւանի մէջ ծագած խռովութիւնները հանդարտեցնելու համար, Բ. Գուրգերը որոշած է քանի մը զիջումներ ընել Տիրալիսերուն Տեղական Իշխանու-թիւնները հրաման ստացան չ'պնդելու յիշեալ տուրքե-րու վճարման վրայ:

Տիրալի չէյիբերը, որոնք վերջին ապստամբութեանց հետեւանքով աքսորուած են կայսրութեան զանազան նահանգները, արտօնուեցան վերադառնալու իրենց տե-ղերը՝ խոտովանելով որ իրենց ազգեցութիւնն ի գործ գնեն, իրենց պարտականութեան մէջ անխախտ պահելու իրենց հայրենակիցները: Սուլթանը զանոնք զեւ եր-կիրին չ'զարձուցած, Կ. Պոլիս բերել տուած է զանոնք՝ գահին շքովը, մայրաքաղաքին շքեղութիւններովն ու բարի բարի վարմունքովը համոզուած բերելու համար: Երբ հոն կը հասնին, կայսրական գանձին ծախքովը զանոնք ներ կ'ստանան ու Սուլթանին խոհանոցներէն կը կերակրուին որչափ ատեն որ հոն կը մնան անոնք, 300 է աւելի թուով:

— Տեղացի լրագիր մը կը պատմէ թէ՛ Գահիրէցի մահմետական մ'առաջարկած է կազմել յանձնախումբ մը, հանգանակութեամբ գուժար մը ժողովելու, Սուլ-թանին ընծայ մը նուիրելու համար յառա՛իկայ 31 Օգոստոսի գահակալութեան յօրեկանին առթիւ:

Այդ ընծան Սուլթանին պիտի մատուցուի եղբր չորս հինգ անդամներէ բաղկացած յանձնախումբ մը կողմէ, որ յատկապէս Կ. Պոլիս պիտի երթայ ասոր համար:

Շիտակը կ'արժէր յորեկանը տօնել գահակալի մը, որ թուրքիոյ գահավիժու մը փութացնող յատկութիւն-ներով օժտուած է:

Հետազոտները միաբերան կը հաստատեն Չինաստա-նի ծանրակշիռ կաշուութիւնը. վայրկեան վայրկեան անակնկալներ կ'սպասեն. անխուսելի դարձած է Չինո-եւրոպական պատերազմը:

Հ Ա Յ Ո Ւ Ե Կ Յ Ի Ռ

ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾԱՆՈՒԹԵԱՆՑ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿ. ՀԱՅՈՑ Ակտեալ 1899 Մայիսէն մինչ 10 Յունիս 1900

Մ Ո Ւ Տ Բ

Table with 2 columns: Year/Item and Amount. Includes entries for 1899 Մայիս 1էն մինչ Դեկտ. 31 ամսա-վճարներու գանձումէ, 1900 Յունվար 1էն մինչ Մայիս 31 ամսա-վճարներու գանձումէ, 1899 Մայիս 1էն մինչ Դեկտ. 31 նպաստ ի զանազանաց, 1900 Յունվար 1էն մինչ այսօր նպաստ ի զանազանաց, Ապրիլ 14ին գնուած սրկու Գրէտի Փօն-սիէի կտրօններ գանձում, ԹԱՏՐՈՒՆԻ ՀԱՇԻԻ. — Զանազան տոմսե-րու արժէքն գանձում, Նուէր ի զանազանից, Պահանջ Բոէնս ձէլալներէ 2 լոժ Ա., Ի զանազանաց 3 թիկնաթոռ.

Ե Լ Բ

Table with 2 columns: Year/Item and Amount. Includes entries for 1899 Մայիս 1էն մինչ 31 Դեկտ. գան-զան ծախս ըստ տօմարի, 1900 Յունվար մինչ այս թիւ տօմարներու սպազութեանց, հաւաքի և այլ ծախս ըստ տօմարի, Թատրոնի առթիւ եղած զանազան ծախսեր Մայիս 8 թուականու կիրարոսի Ազգ. կըր-թարան-Որբանոցի զրկուած Գրէտի Լի-ոնէի չէքով մը, ՊԱՏՐԱՍՏԻ. — 4 հատ Եգիպտ. Գրէտի Փօն-սիէի պարտատոմսեր իրենց գնման ար-ժէքով ըստ ընկալարի, Հնչուէն դրամ ժողովոյ Ատենապետին քով Պահանջ ի զանազանից թատրոնի տոմսերէ

Վանն ճշգրութեան կը վաւերացնենք Ի զիմաց Գործ. ժողովոյ Որբասիրաց ընկերութեան Գահիրէի Ատենապետ Ատենապետի Կ. ԵՐՋԱԿԱՅԵԱՆ Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ Ա. ՊԷՐՊԷԻՐԱՆ Գահիրէ 11 Յունիս 1900

ԿՈՒԶԷՒՔ ՈՒՆԵՆԱԼ ՈՍԱԿԻ ԿՈՒԷՆ ՀԱՐՈՂ, ԽԻՍՍ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ ԺՍՄՍՑՈՅՑ ՍԸ ՄԻՄԻԱՅԸ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ ԴԻՄԵՑԷՒՔ

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյց-ներու ամենադիւրամտելի գներէն սկսելով մինչեւ ազամանազարդ: Արծաթ ժամացոյցներ 50 զրուչէն սկսեալ Նիքէլ ռումբուտ ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ և ոսկեպատ 2ԸՂ-թաներ և գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի և քօնաօլի բազմազան բանտիւրներ:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յա-տուկ, 10 Ղրուչի սնահաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըսնին:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի: ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

«Նոր Օր»ի համակրելի Արտօնատէր Մ. Փ. Միւնիէ, որ խմբագիր է նաեւ «Ալ-Մուսայաս» ֆրանսական շա-բաթաթերթին, սկսած է հրատարակել «Սուրհանդակ Նե-ղուսի» (Courrier du Nil) անուննոր թերթ մը, որմէ մէկ օրինակ նուիրած է Լսարան-Ընթերցատան ընկերու-թեան:

Նկատելով յարգելի հրատարակարէն քանիցս ա-պացուցած ջերմ համակրանքն առ Հայաստան, կը փու-թանք շնորհաւորել իր նոր թերթին երեւումն և լիա-կատար յաջողութիւն և յարատեւութիւն մաղթել մեր հայասէր եղբայրակիցն:

Պատ. Վարչութիւն «Նոր Օր» լրագրոյ Ի Գահիրէ

Ժողովս այսու կը փութայ իր ջերմ շնոր-հատութիւններն ուղղել առ Պատ. Վարչու-թիւնը՝ «Նոր Օր» ի բարեպատեհ հրատարա-կութեանը առթիւ, մաղթելով կատարեալ յա-ջողութիւն և անսայթաք յառաջդիմութիւն:

Ժողովս ապրիլ 10 թուագրով՝ ի հաշիւ ընկերութեան վեց նոր որբեր ևս յանձնարա-րած ըլլալով Վարչապայ Վանուց Որբանոցի Պատ. Հոգաբարձութեան, ստացած է այս վերջնոյն պատասխանը, յայտնող որգեղարու մը վեց որբոց հանդերձ իրենց իւրաքանչիւրին անուսովը և ծննդավայրովը, և սրու մէկ պատճէնը ներփա-կեալ կ'ուղարկէ Պատ. Վարչութեանը խնդրելով անոր հրատարակութիւնը օգտաշատ «Նոր Օր» յի մէջ, ի գիտութիւն ընկերութեանս Պատ. ան-դամոց և աղգայնոց:

Սոյն վեց որբերով՝ ընկերութեանս որգե-գրած որբերու թիւը կը հասնի ութի:

Ընդունեցէք, Տեարք, մեր յարգանաց հա-ւաստին:

Ի զիմաց Գործադիր Ժողովոյ Ատենապետ Ատենապետ Լ. ԱՌՄՊՈՒՔՃԵԱՆ Գ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆ Գահիրէ, 16 յունիս 1900

ՊԱՏՃԷՆ Վան, 29 Ապրիլ 1900 Մեծ. Տիրա Ատենապետ Պատ. Գործադիր Ժողովոյ Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան Ի Գահիրէ

Ուրախութեամբ ստացանք Ձեր թիւ 19 Ապրիլ 10 (Ն. Տ.) թուակիր գրութիւնը, որով ընկերութեանը «քիչ ժամանակուան մէջ մեծ յաջողութիւն և նիւթական քաւերութիւն գտնելը» ծանուցանելով, բարեհաճած էիք վեց նոր որբեր ևս Ձեր պաշտպանութեան ներքեւ առնուլ, ուստի լիշեալ նոր պաշտպանեալներու ընտրու-թեան համար կը յանձնարարելիք մեզ գարձանն:

Լսելով մեր նոր որբ ընդունելու ծանուցումը, քիչ ատենի մէջ բազմաթիւ որբեր ներկայացան, յորոց մե-տրեցինք հետեւեալները, ցաւ ի սիրտ մերժելով միւս-ները, որոնք մեծ դժուարութեամբ ճամբուեցան, զի իմանալով իրենց մերժումը՝ դառնազին կիրպով կար-տատուէին, բիւր պաղատանքներ ուղղելով մեզ:

1 Պագէ Սարգիսեան, Խիզանի Խարտոց գիւղէն, 11 ամեայ, հայրն մնում, մայրն ողջ: Սա իրենց գիւղի գաղթականներին ու մօր նեւ տեղս եկած էր, տեսնելով իր աշխուժութիւնն, անմիջապէս հաւատ կողմեցինք իր վրայ ու առաջին անգամ զինք ընտրեցինք:

2 Տիգրան Յովհաննէսեան, Ա. անց գիւղացի, 12 ամեայ, անհայր ու անմայր վերջին գէպերէն ի վեր անտէր մնալով Պրոտանդանց թիւրք գիւղին մէջ գացած ինկած էր, հայ լիզուն կէս մը մոռնալով. վերջերս կրօնափոխութեան համար իրեն տուալարկներ եղած լինելով, փախած ու զիմած էր ազգի պաշտպա-նութեան:

3 Յուսիկ Աւետիսեան, Շատախի գիւղացի, 10 ամ-եայ, անհայր ու անմայր, 4 տարիէ ի վեր բարեպէր ան-ձի մը պաշտպանութեան ներքեւ էր, որ չէր կարող այլ ևս շարունակել:

4 Մկրտիչ Մարգարէան, քաղաքիս Աղուիսաձոր թաղէն, 9 ամեայ, հայրն ու մայրն վերջերս մեռած ըլլալով, 5 զաւակներ մնացած էին անտէր. որոնցմէ մին էր սա:

5 Ինուց Մարգարէան, քաղաքիս Արաբուց թաղէն, 10 ամեայ, հայրն մեռած ըլլալով երկու որբեր թողած էր մօրն վերայ, ատենց բնաւ ապրուստի միջոց ունենալու, ուստի շատ օրերով անօթի մնալուն, յարմար դատեցինք մէկին հոգն բաճնալ մօր վրայէն:

6 Արգառ Պետրոս ձնեղկեան, քաղաքիս կլոր-դարի թաղէն հայրն մեռած, իսկ մայրն Արճէշ էրկան գնացած ըլլալով անտէր ու անխնամ մնացած էր, 9 ամեայ:

Թիշեալ որբերն դեռ այս շարժու զրկուեցան, ուստի անոնց հագուստներն պատրաստելէ յետոյ, իրենց լուսանկարները՝ առջի 2 պաշտպանելոց հետ միասին ու ձեր հրահանգի համաձայն հանել տալով կը զրկեմք 1-2 շաբաթէն:

Ժողովոյդ փետր. 8 թուակիր գրութեան հետ զրկուած վեց անգլ. ոսկին ժամանակին ստանալով, ծանուցած ենք ձեզ մեր Ապրիլ 8 թուակիր գրութեամբ Դոյն գումարը առաջի 5 անգլ. ոսկու գումարին հետ երկու որդեգրելոց տարեվճարի հաշւոյն անցուցած եմք:

Գոհութեամբ կը ծանուցանեմք որ հաստատութիւնս յառաջ կերթայ շնորհիւ ազգին ու բարերարաց, եւ թէ պաշտպանեալ որբաց թիւն հասած է ճիշտ 100-ի: Սոյն քաջալերութեանց շնորհիւ հոգաբարձութիւնս մտադիր է նորանոր բարեօքուսներ մտցնել վարժարանի մէջ, բարձրացնելով տրուած ուսման աստիճանը եւ ուրիշ արհեստներ ալ աւելցնելով:

Շնորհակալութիւն յայտնելով օգուտ հաստատութեան ձեր ջանից համար, կը խնդրենք ընդունիլ մեր յարգանքները:

Դիւան հոգաբարձութեան Վարդայ Ս. Վանուց Ատենադպիր Ատենապետ Դեր-Նախագահ Թ. ՊԱՌԻՉԵԱՆ Ա. ԱՂՈՒԱՆԵԱՆ Մ. ՔԶ. ՃԱՆԿԵԱՆ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ

ՄԵԿ ՆԻՍՏԸ

ՁԱԽԵՇՏ ՄԵԿ ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ Դ.

ՍՐԲՈՒՀԻ. Գերս մտնելով. — Տան տէրն էր...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ի՞նչ կուզէ որ...

ՍՐԲՈՒՀԻ. — Ի՞նչ պիտի ուզէ. տանը քերան կուզէ. ըսի որ տանա չեկաւ խաւաճան...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Է՛հ, աֆէրիմ... հէլէ բան մը ըրած ես... գնա՛ց...

ՍՐԲՈՒՀԻ. — Գնաց... վաղը նորէն պիտի գայ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Բան գործ չունի նէ, թող գայ... Հոս ալ ըլլած նէ, ըսէ՛ որ հոս չէ...

ՍՐԲՈՒՀԻ. — մարդը է՛ն վերջը ունեցածնիս չունեցածնիս հակը ընել պիտի տայ, գիտեմ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Գողերը տանելուն՝ ան թող հակը ընել տայ, աւելի աղէկ...

ՍՐԲՈՒՀԻ. — Դուն ալ տանա ասանկ ժողովներէ վազ մի՛ գար... բանը գործը ձգէ աէ, ընկերութեան գործերուն ետեւէն վազէ. գիշերն ալ զիս թէտրիկին ըրէ՛ ասանկ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Շատ մի սրտոտար. ստ քու գիտնալու բանը չէ... Դուն գնա՛ ներտիվաններուն վրայ լամպա մը դիր, անդամներն ուր որ են նէ՛ կուգան հիմա... գուռը կը զարնուի: Դունն է նորէն, տե՛ս ո՛վ է առ... էկէր տան տէրն է նէ, ըսէ որ չեկաւ տանա... Սրբուհի կը մեկնի: Անպիտան մարդ, աճէլէդ ի՞նչ է... ստակը չ'պիտի ուտեմ ես... հէլ պէթ պիտի տամ որ մը... ասոր հինգ տարի է որ քու տունդ եմ... հինգ տարուան մէջ առնելիքդ ինչ վեց ամսական է. վեց ոսկի այսինքն... աս ամսուն չտամ նէ՛ եկող ամսուն կուտամ, եկող ամսուն չտամ նէ, թախ մէկալ ամսուն կուտամ... էնճէմի պիտի տամ. տանա ուղեւ՛րդ...

ՏԵՍԻԼ Ե.

ՍՐԲՈՒՀԻ. Ետեւն արապ մը. — Հոս նայէ՛...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Առ ո՛վ է... ատի՛նչ կուզէ...

ՍՐԲՈՒՀԻ. — Մտտուկ մը կազ բերած է...

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Կա՞ց... տէր ողորմեա՛. սխալ բերած չըլլա՞յ... Արապից. խապար է՞, ես՛ կատա. (Ի՞նչ լուր, ո՛վ քաջ):

ԱՐԱՊԸ. — Մուշ ընդա խալակա Ուսն՛ ի՛ն. (գուն տիար Յովհաննէսը չէ՞ս):

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Այուա... ֆի է՞... (այո, ի՞նչ կայ):

ԱՐԱՊԸ. — Կէպի ու մին սնտը խալակա Սարգիս սանտու կազ ուա՛յ կէվալ տի (Տիար Սարգիսէն սընտու կ մը կազ ու այս նամակը բերի):

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գառակը կ'առնէ ու կը կարգայ. «Նկատելով որ մեր ժողովոյ նիստերուն առթիւ այնչափ կազ կ'սպասէք գիշերներն ազգասիրաբար, կը զրկեմ ձեզ սնտուկ մը կազ եւ կը խնդրեմ որ զայն քնդուեցնելու բարեհաճիք:

Յարգանքներս ու բարեւներս Ձերդ Ս. ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ

«Յ. Գ. Այս գիշերուան ժողովին գուցէ չկարենամ ներկայ գտնուիլ կարի բանաւոր պատճառով մը. հետեւաբար իմ բազակայութիւնս թող արգիւք մը չ'ըլլայ ձեզ. կրնաք նիստը բանալ ու առկախ մնացած խնդիրներն կարգադրել. ՆՈՅՆ»

Դառնալով Արապից. Թայիպ, Թայիպ. (չստ լաւ, չստ լաւ):

ԱՐԱՊԸ. — Մուշ ալիշանաք տօ՛լ (քեզի համար չե՞ն ատնոք):

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Այուա, Այուա՛. ալիշանի (այո՛, այո՛, ինծի համար է):

ԱՐԱՊԸ. — Իպէ լէյլիքում սայիտ. (ուրեմն գիշեր բարի ձեզ):

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Լէյլիքաք Սայիտա. (գիշեր բարի քեզ): Արապը մեկնելու կը լինի Մուշ դշրապ ահուս՛, (սուրճ մը չիս խմեր):

ԱՐԱՊԸ. — Ալլա իսթուրաք, ես՛ խալակա, ընդա բակը թայիպ... սայիտա (Աստուած օրհնէ քեզ, Տէր իմ, դուն լաւ մարդ ես. գիշեր բարի):

Կը մեկնի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Սայիտա (գիշեր բարի): Սրբուհիից. ի՛նչ կայներ ես, գնա՛ գուռը գոցէ՛...:

Սրբուհի կը մեկնի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ առանձին. — Է՛հ պոալօ, Պ. Փէհլիվանեան, իրաւ որ տղան Փէհլիվանեան եղբր է... Ըրածը շատ մախպուլի անցաւ... Ի՛նչ աղէկ կ'ըլլար եթէ մէկալ անգամներն ալ մէկ երկու զէմպիլ սուրճ, մէկ երկու չուվալ չէքէր զրկեն... չէ՞ մի որ կազին չափ ալ սուրճ ու չէքէր կ'սպասի... ա՛լ կոտրած ֆինճաններն ու թապախները մի՛ հաշուեր... Ես սա վարդի պէս մաշած խալիսիս... չիտակը, եթէ նըստիմ հայիւ ընեմ, սա մէկ տարուան մէջ ոահաթ ոահաթ տասը ոսկի ջուրին մէջ պիտի գտնեմ... տասը ոսկի... տանս տասը ամսուն քերան... մե՛ղք, մե՛ղք... Եւ մէկ մ'ալ եկուր ասոր հետոյ ընտրելիս խօսքերը լսէ՛... հա՛ Պէգիքճեան ընկերութեան ստակները կուտէ, հա՛ աս ըրած է, հա՛ ան ըրած է... վերջապէս տեսակ տեսակ հաշանքներ, կրնաս մտիկ ընել նէ ըրէ՛... Տո՛ւր հազարներով շատ աղէկ մարդ ես, կե՛ր կամ սխալմամբ վրադ մտցիր ընկերութեան մէկ զուրուշը, քննէ գէշը չկայ. գող տէյի անունը չալ կ'ընես... ամա՛ս'ան. աս հայ ժողովուրդը... խօսքը մէջընդմիջ, ախմախ կնիկա շատ իրաւունք ունի... պէ հէրիֆ, դուն ո՛վ, ընկերութեան մը Գործ. ժողովոյ անդամ եղողը ո՛վ. դուն քու փորդ կշտացնելու միջոցները խորհէ՛... եթէ ասոր անօթի ստուկիս նէ ստ ընկերութիւնը քեզի փարա մը կուտայ... լէշը կը վերջընէ... քու ընկերներդ պիլէ յարգը չեն ճանչնար... իշթէ աչքիս առջին է. այսչափ կը վազեմ ու այսչափ զրպանեմ ծախքեր կ'ընեմ... մօպիլիաներս կը մաշեցնեմ... խանութս ձգած, կ'երթամ ասկէ անկէ նըւէրներ կը հաւաքեմ... ասոնց ո՞ր մէկը տեղ մը գըրուած է... ասանազպիր մ'ունինք որ տանա արձանագրութիւն մը չէ ըրած. գանձապետ մը, որ թէֆտէրին ո՞ր կողմը կը գրեն ելքն ու մուտքը, խապար չունին Ասանկերուն գիտե՞ս ի՛նչ կը վայելէ. քաշել առնել թէֆտէրները... գրել դժել ամին կողմ իմ ամին ըրածներս. մէկալ կողմն ալ անոնց սա մասխարկութիւնները տեղն ի տեղօք, բացէն ի բաց արձանագրելէ՛ն վերջն ալ խոշոր խոշոր գրերով աւելցնել — անոնք որ ետեւէս միս կ'ուտեն, ոսկորներս կը կրծեն, թող սա թէֆտէրներն անոնց ազգասիրը կոտորեն... ասնոք ալ որ կը լսեն ու չեն խօսիր իմ ըրած ծառայութիւններս, թող սա թէֆտէրները պօսան կանչեն. «Եթէ դոքա լուսպն, քարիւք աղաղակեցնեն» պէս բան մը... ա՛խ, եթէ ասնկ քիչ մը գողը կարգացող ըլլայի, խաչ որ կ'ընէի սա ըսածներս... բան մը պակաս չէի թողեր:

(Շարունակելի)

Որբերու Հոգատար-ընկերութեան Պատ. Հիմնադիր Ժողովէն զրկուած է Վարչութեանս հետեւեալն ի հրատարակութիւն:

Որբերու Հոգատար ընկերութեան հիմնադրաց ժողովը ի նիստ հրաւիրեալ է յառաջիկայ կիրակի 11(24 յունիս երեկոյեան ժամը 4 ին Ազգային մանկապարտէզի սրահ եկեղեցոյ շրջափակին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

Թղթակցութիւնք. Վեցամսեայ հաշուեկէլու.

Կը խնդրուի Պատ. ընկերներէն որ սոյնը իբր հրատարակելու նկատելով բարեհաճին ներկայ գտնուիլ յիշեալ նստին եւ կատարել իրենց ընկերական պարտականութիւնը:

Դիւանս գո՛հ կը մնայ եթէ բաժանորդ չեղող սակայն ընկերութեանս նպատակին համակիր Պատ. ազգայիններուն բարեհաճին ներկայ գտնուիլ:

Հիմնադրաց ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Ս. ՉԱԲՐԵԱՆ Վ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ

Գահիրէ 6/19 Յունիս

Ա. Ձ. Դ.

Լսարան Ընթերցատան Պատ. Գործ. Ժողովոյ Դիւանը կը փութայ ծանուցանել ընկերութեան արգոյ անդամներուն որ հաճին իրենց յետեւեալ ամսավճարները բերել վճարել ընկերութեան կեդրոնատեղին, որ է «Նոր Օր» ի խմբագրատունը, Պաշար Մուրուրի մէջ, թիւ 38 խանութը:

Դիւանը կը խնդրէ որ արգոյ ընկերները փութացնեն իրենց վճարումները, որպէս զի ձայն ունենան Ընդհ. ժողովոյ յառաջիկայ նիստին մէջ, որ տեղի պիտի ունենայ Գործ. ժողովոյ ութամսեայ հաշուեկէլուը քննելու եւ ուրիշ կարեւոր խնդիրներու վրայ խորհրդակցութիւններ կատարելու համար:

ԿԵՄԱՆԷԹՃԻ ԱՍՏԻԿ (ԱԻԱՆԴԱՏԱՐ)

ՇԱՐԻ ՄՕՀԱՄԲԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԳ, ԳԱՀԻՐԷ Կ. Պոլսոյ մուսուլմանաթի խմբուիցն Բոլ Թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղէէ Գարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը բնակող եւ երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ եւ ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը գրաւող Եմանեթի Աբրահամ էֆ. Պայթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս եւ Եգիպտոսէն Կ. Պոլսու զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու տպահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: Year (1900-1904) and values (360, 8616, 6037, 1835, 2685, 355, etc.)

Le gérant, J. MUNTIER.

Տպագրութիւն Ս. ԴԱԲԻՆԵԱՆ — Պագար Մուրուր